| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Տիգրան Ստեփանյան<br>16.02.2024 21:40:58 | Խնդրում եմ պարզաբանել՝ արդյո՞ք նախագծով առաջարկվում է մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի /այդ թվում՝ անհատական բնակելի տների/ նկուղային տարածքները առանց սեփականատերերի թույլտվության և համաձայնության՝ դարձնել այլ անձանց համար օգտագործելի | Նախագծի դրույթների կիրառումը անհատական բնակելի տների մասով խորհրդատվական բնույթի է՝ հիմնված սեփականատիրոջ նախաձեռնության վրա: Ինչ վերաբերում է բազմաբնակարան շենքերին, ապա դրանց նկուղային հատվածները հանդիսանում են բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն: Ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը իրականացվում է ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնի՝ շինությունների սեփականատերերի ժողովի կողմից և վերջիններիս ընդունած որոշումների համաձայն՝ ըստ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի: Խնդրի առնչությամբ հատկանշական է Նախագծի «…նկուղային հարկաբաժինների սենքերը (բացառությամբ մետրոպոլիտենի) կարող են շահագործվել ըստ թույլատրելի գործառնական նշանակության..» նկարագրության բովանդակությունը, որն ամենևին պարտադրական չէ: | |